ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.03.2022թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/77

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Բողոք բերող՝ «Էնջինիրինգ» ՓԲԸ

Մասնակցությամբ՝
«Էնջինիրինգ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Գ. Վիրաբյանի, Հ. Հովակիմյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 17.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2822-2022 գրությամբ «Էնջինիրինգ» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 10.02.2022թ.-ի 02/16.4/1197-2022 գրության հիման վրա, 17.02.2022թ.-ին «Էնջինիրինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 17.02.2022թ.-ին:

17.02.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/77 համարի ծածկագիրը:

02.03.2022թ.-ին և 18.03.2022թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 02.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.03.2022թ.-ին:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 10.02.2022թ.-ի 02/16.4/1197-2022 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 7-ին հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12 ծածկագրով ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ են ներկայացրել «Տ-Քնսթրաքշն» և «Էնջինիրինգ» փակ բաժնետիրական ընկերությունները, ինչպես նաև «Գևորգյան և Ներսիսյան» և «Երվադա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (այսուհետ՝ Ընկերություններ):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերություններին ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել ներկայացված հայտերում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջիններիս կողմից սահմանված ժամկետում ամբողջությամբ չի կատարվել:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերությունների հայտերը մերժվել են:

Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում՝ կից ներկայացնում եմ Ընկերությունների տվյալները և հաստատված գնումների պլանը տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող կայքից արտատպված փաստաթղթերի պատճենները:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Էնջինիրինգ» ՓԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Էնջինիրինգ» ՓԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 17.02.2022թ.-ի գրությամբ դիմել է «Էնջինիրինգ» ՓԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2822-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

«Էնջինիրինգ» ՓԲԸ-ն 22.02.2022թ.-ի թիվ Է-3/22 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 2021թ. դեկտեմբերի 7-ին հայտարարել է ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման բաց մրցույթ :

2. «Էնջինիրինգ» փակ բաժնետիրական ընկերությունը , ի թիվս այլ մասնակից-ների, ներկայացրել է Մրցույթին մասնակցելու հայտ:

3. Պատվիրատուն Մրցույթի հայտարարության մեջ նշել է, որ մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով՝ մինչև 2022թ. հունվարի 17-ը՝ ժամը 11:00-ը:

4.1 2022թ. հունվարի 17-ին՝ ժամը 11:00-ին, տեղի է ունեցել գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը:

4.2 2022թ. հունվարի 17-ի N 2.1 արձանագրության 1.1 կետի «գ» ենթակետում նշվել է՝ «Գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ 2022թ. հունվարի 17-ը՝ ժամը 11:00-ը:

4.3 N 2.1 արձանագրության 2.1 կետում նշվել է՝ «Ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել սույն ամսաթվից հաշված (ընդ. մերն է) մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում»: Այսինքն՝ Պատվիրատուն հստակ արձանագրել է, որ տասը աշխատանքային օրվա հաշվարկը պետք է սկսեր՝ 2022թ. հունվարի 17-ը համարելով որպես այդ հաշվարկի մեջ առաջին աշխատանքային օր: Հաշվի առնելով, որ 2022թ. հունվարի 27-ը և 28-ը եղել են ոչ աշխատանքային օրեր, ապա տասը աշխատանքային օրը լրանում էր 2022թ. փետրվարի 1-ին:

5.1 2022թ. հունվարի 31-ին՝ ժամը 17:00-ին, տեղի է ունեցել Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի նիստը:

5.2 Պատվիրատուի գնահատող հանձնաժողովը 2022թ. հունվարի 31-ի N 2-2 արձանագրության 1.1 կետով Մասնակցի վերաբերյալ նշել է՝

«1. Հավելված 1.2-ի մասով՝

ա) 1-2 տողերով ներկայացված է մեկից ավելի արտադրող, իսկ մոդելը գտնել չի հաջողվել,

բ) 127-134, 136, 138-141 տողերում ներկայացված է մեկից ավելի արտադրող և ներկայացված մոդելնե-րը չեն համապատասխանում հրավերի պահանջներին,

գ) ներկայացված չեն մոդելներ հետևյալ տողերում՝ 18-103, 119-120, 123՝ նշվածը չի հանդիսանում մոդել,

դ) ներկայացված չէ արտադրող հետևյալ տողերում՝ 104-109՝ նշվածը հանդիսանում է մոդել,

ե) 1-109,119-125, 127-141 տողերով ներկայացված չեն տեխնիկական բնութագրեր:

2. Ներկայացված չէ ծավալաթերթ-նախահաշիվը»:

5.3 Պատվիրատուի գնահատող հանձնաժողովը N 2-2 արձանագրության 2.1 կե-տով որոշել է կասեցնել նիստը և ծանուցել 1.1 կետում նշված մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 01.02.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

5.4 N 2-2 արձանագրության 2.1 կետում նշվել է՝ «Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մասնակիցների կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 02.02.2022թ.՝ ժամը 16:00-ին»:

6. Մասնակիցը շտկումները ներկայացրել է սահմանված ժամկետում:

7.1 Մասնակիցը 2022թ. փետրվարի 2-ին ստացել է Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի 2022թ. փետրվարի 2-ի՝ ժամը 16:00-ի նիստի N 2-3 արձանագրությունը :

7.2 Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի N 2-3 արձանագրության 1-ին կե-տում նշել է՝ «Գնահատող հանձնաժողովը որոշեց 31.01.2022թ. N 2-2 արձանագրության 2.1 կետում նշված «02.02.2022թ.» թիվը փոխարինել «04.02.2022թ.» թվով»:

8.1 Գնահատող հանձնաժողովը 2022թ. փետրվարի 4-ի՝ ժամը 16:00-ի նիստի N 2-4 արձանագրության 1.1 կետում նշել է՝ «Ընդունել ի գիտություն, որ ներկայացված փաս-տաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանու-թյունների մասին 31.01.2022թ. ծանուցվել է […] «Էնջինիրինգ» ՓԲԸ-ին՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, որոնք ընկերությունների կողմից ամբողջությամբ չեն շտկվել […]»:

8.2 Գնահատող հանձնաժողովը 2022թ. փետրվարի 4-ի N 2-4 արձանագրության 1.1 կետով Մասնակցի վերաբերյալ նշել է՝

«Հավելված 1.2-ի մասով չեն շտկվել

ա) 98-103 տողերով ներկայացված մոդելները չեն հանդիսանում հրավերով պահանջվող սարքավոր-ման տեսակ (օդի դիմահարի կամ ծխահեռացման օդամղիչի փոխարեն այն հանդիդսանում է փական),

բ) 131-133 տողերով մոդելի փոխարեն ներկայացված է սերիա, իսկ սերիայում առկա մոդելներն առա-վելագույն տեխնիկական բնութագրով չեն համապատասխանում հրավերի պահանջներին,

գ) 127-128, 138 տողերում ներկայացված չեն մոդելներ,

դ) 136 տողում ներկայացված չէ արտադրող»:

8.3 Գնահատող հանձնաժողովը N 2-4 արձանագրության 2.1 կետում նշել է՝ ««Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշեց ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12 ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած»:

9. Պատվիրատուն, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը, 2022թ. փետրվարի 10-ին թիվ 02/16.4/1197-2022 գրությամբ Մաս-նակցի տվյալներն ուղարկել է ՀՀ ֆինանսների նախարարություն :

10. Լիազորված մարմինը, 2022թ. փետրվարի 17-ին թիվ 26/26-1/2822-2022 գրությամբ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, նախաձեռնել է ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

11. Բողոքներ քննող անձը 2022թ. փետրվարի 17-ին Մասնակցին ծանուցել է Լիազորված մարմնի կողմից նախաձեռնված ընթացակարգի մասին: Ծանուցման մեջ նշվել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված Մասնակցի կարծիքը գրավոր ձևով Բողոքներ քննող անձին պետք է ներկայացվի երեք աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն գործի շրջանակներում վեճի առարկան հանգում է հետևյալին՝

(1) արդյո՞ք գործում առկա փաստական հանգամանքների համատեքստում Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանություններն ամբողջությամբ չշրկելը հիմք է Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար.

(2) արդյո՞ք մասնակիցը (խոսքն ընդհանրապես մասնակիցների մասին է) կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե պատվիրատուն (խոսքն ընդհանրապես պատվիրատուների մասին է) ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված հայտերի գնահատման ժամկետի խախտումից հետո է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը (մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը) ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխա-տանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալներն ուղարկում լիազորված մարմին:

1. Դիրքորոշման ՄԱՍ Բ.-ում նշված վեճի առարկայի վերաբերյալ Մասնակցի մոտեցումը հետևյալն է՝

(1) սույն գործում առկա փաստական տվյալների համատեքստում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանություններն ամբողջությամբ

չշփկելը հիմք չէ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար.

(2) մասնակիցը չի կարող ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրա-վունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե պատվիրատուն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտումը հայտնաբերել է Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված հայտերի գնահատման ժամկետի խախտմամբ:

2. Մասնակիցը վեճի առարկայի վերաբերյալ իր մոտեցումը հիմնավորելու նպա-տակով դիրքորոշման ՄԱՍ Դ.-ում ներկայացրել է այն հարցերի շրջանակը և մեթոդա-բանությունը, որոնք հնարավորություն են տալիս ՄԱՍ Ե.-ում հանգելու վերը նշված եզրահանգումներին:

1. Սույն գործով առկա վեճի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ հետևյալ հարցերին՝

(1) հարց՝ առկա իրավակարգավորման պայմաններում ո՞ր դեպքում Մասնակիցը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնա-կիցների ցուցակում.

(2) հարց՝ առկա իրավակարգավորման պայմաններում պատվիրատուն ի՞նչ ժամ-կետում պետք է գնահատի հայտերը, և ի՞նչ հետևանքներ կարող է առաջանալ պատվի-րատուի և գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտած մասնակցի համար, եթե պատվիրատուն խախտում է հայտերի գնահատման ժամկետը:

2. Վերը նշված հարցերի պատասխանները ստանալու նպատակով անհրաժեշտ է՝

(1) հարց 1-ի մասով՝ համակարգային և նպատակաբանական վերլուծության են-թարկել Օրենքի համապատասխան դրույթները՝ փոխկապակցված Կարգի անհրաժեշտ իրավակարգավորումների հետ.

(2) հարց 2-ի մասով՝ համակարգային վերլուծության ենթարկել Օրենքի և Կարգի համապատասխան իրավակարգավորումները:

3. Վերը նշված հարցերի պատասխանները ստանալու համար անհրաժեշտ է կի-րառել մեկնաբանման հետևյալ եղանակները՝

(1) քերականական.

(2) համակարգային.

(3) նպատակաբանական:

1.1 Վեճի առարկա և հարց.

- վեճի առարկա՝ արդյո՞ք գործում առկա փաստական հանգամանքների համա-տեքստում Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանություններն ամ-բողջությամբ չշտկելը հիմք է Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրա-վունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար.

- հարց՝ առկա իրավակարգավորման պայմաններում ո՞ր դեպքում Մասնակիցը կարող է ներառվել գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցու-ցակում.

1.2 Իրավական հիմքեր և հիմնավորումներ.

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ «Գնումների մասին Հայաստանի Հանրապե-տության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիա-կան օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից […]»:

Օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Գնումների, այդ թվում՝ բողոքի քննման հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն, և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հա-րաբերությունները կարգավորող օրենսդրությամբ»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հայաս-տանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը կազմված է սույն օրենսգր-քից և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքներից»:

Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ «Այլ օրենքներում պա-րունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն սույն օրենսգրքին»:

ՀՀ ՔՕ-ի 1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Քաղաքացիական օրենսդրությու-նը, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող՝ Հայաստանի Հան-րապետության Նախագահի հրամանագրերը և Հայաստանի Հանրապետության կառա-վարության որոշումները […] կարգավորում են պայմանագրային և այլ պարտավորու-թյուններ, […]»:

Վերոշարադրյալ իրավանորմերից բխում է, որ՝

ա) գնման հարաբերությունները քաղաքացիաիրավական հարաբերություններ են.

բ) Օրենքը ՀՀ քաղաքացիական օրենսդրության մաս է կազմում և կոչված է կար-գավորելու քաղաքացիաիրավական բնույթի գույքային հարաբերություններ.

գ) Օրենքի դրույթները պետք է մեկնաբանել ՀՀ ՔՕ-ով նախատեսված նորմերի/ ինստիտուտների էությանն ու բովանդակությանը համապատասխան՝ առաջնորդվելով ՀՀ ՔՕ-ի 8-րդ հոդվածով նախատեսված մեկնաբանման կանոններով.

դ) պատվիրատուն կարող է գնման գործընթացի կազմակերպման պայմանները և կնքվող պայմանագրի պայմանները սահմանելիս օգտվել ՀՀ ՔՕ-ի 437-րդ հոդվածով նախատեսված պայմանագրի ազատության համապատասխան դրսևորումից՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գնման գործընթացի կազմակերպման և պայմանագրի պայմանները նախատեսված են օրենքով կամ այլ իրավական ակտերով, որոնց պատվիրատուն պարտավոր է անշեղորեն հետևել:

Ասվածի համատեքստում առաջարկում ենք անդրադառնալ Օրենքի և Կարգի այն կարգավորումներին, որոնցով նախատեսված պայմանների խախտումը հիմք է մասնակ-ցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցա-կում ներառելու համար:

Օրենքի և Կարգի դիտարկումը ցույց է տալիս, որ դրանց շրջանակներում նախա-տեսված են երկու խումբ կանոններ/իրավակարգավորումներ: Առաջին խումբ կանոն-ների խախտումը հիմք է մասնակցի հայտն անբավարար գնահատելու և հայտը մերժելու, իսկ որպես հետևանք՝ տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար: Երկրորդ խումբ կանոնների խախտումը հիմք է միայն մասնակցի հայտը անբավարար գնահատելու և մերժելու համար: Ստորև առաջարկում ենք քննարկել այս երկու խումբ կանոնները:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Մասնակիցն ընդգրկ-վում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանա-կում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմա-նագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մաս-նակցությունից»:

Սույն իրավակարգավորումից բխում է, որ օրենսդիրը մասնակցին նշված ցուցա-կում ընդգրկելու համար նախատեսել է երեք դեպք, ինչը նշանակում է, որ պատվիրա-տուն հրավերով չի կարող նախատեսել այնպիսի դեպքեր, որոնք նախատեսված չեն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով: Այսինքն՝ պատվիրատուն հրավերի պայմանները սահմանելիս և այն գնման գործընթացում մեկնաբանելիս կաշկանդված է Օրենքի սույն կարգավորմամբ:

Մեր առջև դրված նպատակից և խնդրից/հարցից ելնելով՝ անհրաժեշտ է առավել մանրամասն դիտարկել վերը թվարկված հիմքերը:

Խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Սա ընդգրկում է բոլոր այն դեպքերը, երբ պատվիրատուն ՀՀ ՔՕ-ով կամ պայմանագրով նախատեսված հիմքով միակողմանի լուծում է մասնակցի հետ արդեն կնքված պայմանագիրը՝ որպես մասնակցի կողմից պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանք:

Օրինակ՝ պատվիրատուն մասնակցի հետ կնքել է մատակարարման պայ-մանագիր, իսկ մասնակիցը՝ որպես մատակարար, բազմիցս խախտել է մատակարար-ման ժամկետները, որոնք ՀՀ ՔՕ-ի 466-րդ հոդվածի 2-րդ և 538-րդ հոդվածի համա-ձայն՝ հիմք են պատվիրատուի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու համար: Այդ դեպքում՝ պատվիրատուն պետք է Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետի պահ-պանմամբ մասնակցի/մատակարարի տվյալները՝ համապատասխան հիմքերով ներկայացնի լիազորված մարմնին՝ տվյալ մասնակցին/մատակարարին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու համար:

Քանի որ սույն գործում նախորդ պարբերությամբ նկարագրված դեպք կամ այլ համանման դեպք առկա չէ, ուստի այդ մասով առաջարկում ենք այսքանով սահմանա-փակվել՝ արձանագրելով, որ սույն գործով Լիազորված մարմնի կողմից նախաձեռնած ընթացակարգի շրջանակներում Մասնակիցը նշված հիմքով չի կարող ընդգրկվել համապատասխան ցուցակում:

Միևնույն ժամանակ մեթոդաբանական նկատառումներից ելնելով՝ նախ առաջար-կում ենք ստորև քննարկել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» և «գ» են-թակետերով նախատեսված դեպքերը, կատարել համապատասխան եզրահանգումներ և այնուհետև վերադառնալ «ա» ենթակետով նախատեսված կարգավորմանը:

Որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված այս կարգավորումը վերաբերում է այն դեպքերին, երբ հայտերը գնահատվել են, մասնակիցներից որևէ մեկն ընտրվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, սակայն առանց համապատասխան իրավական հիմքերի առկայության՝ հրաժարվում է պատվիրատուի հետ կնքել պայմանագիր: Մասնավորապես, Օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն

ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը […], ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Այս դեպքում արդեն պատվիրատուն իրավունք ունի տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքով ուղարկել լիազորված մարմնին՝ պայմանագիրը կնքելուց հրաժարված մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու համար:

Այս դեպքը սույն գործի շրջանակներում ևս առկա չէ, ինչը նշանակում է՝ Մասնա-կիցը նշված հիմքով չի կարող ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրա-վունք չունեցող մասնակիցների ցուցակում: Հետևաբար, բացակայում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կարգավորման հետագա դիտարկման անհրաժեշտությունը:

Հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մաս-նակցությունից: Հարկ ենք համարում ի սկզբանե նշել, որ «հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից» ձևակերպմանը պետք է չափազանց զգույշ և բացառապես նպատակաբանական մոտեցում ցուցաբերել: Ինչու՞: Այն պարզ պատճառով, որ այս կարգավորմանը պատշաճ ուշադրություն չդարձնելու դեպքում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված «մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտումը» անհիմն կերպով կարող է որակվել որպես «գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարում» կամ հակառակը: Մինչդեռ, Օրենքի համակարգային դիտարկումը ցույց է տալիս, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված կարգավորումը տարածվում է նախաորակավորման ընթացակարգերի նկատմամբ: Այս համատեքստում օրենսդիրը «գնման գործընթացին հետագա մասնակցություն» ձևակերպումն Օրենքի շրջանակներում օգտագործել է Օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասում և 43-րդ հոդվածի 2-րդ մասում:

Եթե այս կերպ մեկնաբանությունը մերժենք և շարժվենք մեթոդաբանական այլ ու-ղով, ապա կստացվի, որ օրենսդիրն Օրենքի որևէ այլ դրույթի շրջանակներում «հայտե-րը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից» ձևակերպումը չի բացահայտել, ինչը կնշանակի՝ Օրենքը չի պահպանում ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքի պա-հանջները: Մինչդեռ, եթե ընթանանք վերոգրյալում մեր կողմից տրված մեկնաբանու-թյամբ (մեթոդաբանական ուղով), ապա հնարավորություն կստանանք Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին

մասի 6-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված կարգավորումը՝ փոխկապակցված ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի հետ, դիտարկել ոչ թե հակասության, այլ ներդաշնակության մեջ: Արդյունքում, կստանանք այն հարցի պատասխանը, թե ինչ պետք է հասկանալ «հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից» ձևակերպման ներքո:

Հարկ ենք համարում կրկին նշել, որ այս կերպ չառաջնորդվելու դեպքում «հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցու-թյունից» ձևակերպումը/հիմքն անհիմն կերպով նույնացվելու է «մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման» ձևակերպման/հիմքի հետ կամ հակառակը: Իրականում, իրավաբանական տեխնիկայի առումով օրենսդիրն առաջնորդվել է այդ երկու հիմքերը տարբերակելու ճանապարհով՝ դրանց ներքո հասկանալով բոլորովին այլ իրավիճակներ: Այլ խոսքով՝ «հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից» իրավական կարգավորումը տարածվում է բացառապես նախաորակավորման ընթացակարգի նկատմամբ:

Հետևաբար, եթե նախաորակավորման ընթացակարգի դեպքում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված հիմքն առկա կլինի, ապա պատվիրատուն իրավունք կունենա տվյալ մասնակցի տվյալներն ուղարկել լիազորված մարմին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու համար:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ վերը նշված հիմքը նույնպես սույն գործի շրջանակներում առկա չէ: Հետևաբար՝ Մասնակիցն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված հիմքով չի կարող ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնա-կիցների ցուցակում:

Խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հե-տագա մասնակցության դադարեցմանը: Նախքան այս հիմքին անդրադառնալը, հարկ ենք համարում Ձեր ուշադրությունը հրավիրել երկու կարևոր հանգամանքի վրա, որոնք ամբողջի համատեքստում ելակետային են մեր կողմից բարձրացված հարցին պատաս-խանելու համար:

Առաջին՝ Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է, որ. «Մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված պահանջով ներկայացնում է հայտի ապահովում, որի չափը հավասար է հայտով առաջարկվող գնի մինչև հինգ տոկոսին: Հայտի ապահովումը ներկայացվում է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի կամ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով :

Սույն հոդվածի 2-րդ մասում էլ օրենսդիրն ուղղակիորեն սահմանել է՝ «Մասնակիցը վճարում է հայտի ապահովումը, եթե նա՝ 1) հայտարարվել է ընտրված մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից. 2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հան-գեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը. 3) հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցու-թյունից»:

Մեթոդաբանական առումով ո՞րն է մեր կողմից Օրենքի 32-րդ հոդվածը վկայակո-չելու տրամաբանությունը: Տրամաբանությունը մեկն է. փաստել, որ միայն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերի առկայության դեպքում մաս-նակցի նկատմամբ կարող է կիրառվել Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով նախատես-ված գույքային պատասխանատվությունը: Այս համատեքստում էլ Կարգում նախատեսվում են, թե որ դեպքերում որակավորման ապահովումը չի վերադարձվում այն ներկայացրած անձին:

Ասվածը նշանակում է, որ «խախտել է գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործ-ընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը» կանոնը մեկնա-բանելիս այն պետք է հստակ տարանջատել Օրենքի այն կանոնից, ըստ որի՝ մասնակցի հայտն ընդամենը գնահատվում է անբավարար և այն մերժվում է՝ առանց այլ հետևանքներ առաջացնելու: Եթե մենք չտարանջատենք այդ երկու կանոնները, ապա անհիմն կերպով յուրաքանչյուր գործողություն դիտարկելու ենք որպես գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում, որն էլ իր հերթին առաջացնելու է ինչպես Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված, այնպես էլ Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված հետևանքները: Օրենսդիրն Օրենքի շրջանակներում պետք է առաջնորդված լինի (այդպես պետք է մենկաբանվեն համապատասխան կարգավորումները) այն տրամաբանությամբ, որ մասնակցի նկատմամբ բացասական՝ այդ թվում գույքային հետևանքներ կարող են առաջանալ միայն այն դեպքում, երբ նրա գործողության կամ անգործության արդյունքում խախտվում են պատվիրատուի իրավունքներն ու օրինական շահերը, այսինքն՝ պետք է առկա լինեն պարտավորական հարաբերություններ:

Երկրորդ հանգամանքը, որին ցանկանում ենք անդրադառնալ, Օրենքի 3-րդ հոդ-վածով նախատեսված կարգավորումներն են: Մասնավորապես, օրենսդիրը, ելնելով որոշակի նպատակներից, իրավական սկզբունքներից և ակնկալվող արդյունքներից, նորմատիվ իրավական ակտերի միջոցով հասարակական հարաբերությունների կանո-նակարգումն իրականացնում է անհատի ու հասարակության տեսանկյունից: Բնականաբար, այս առումով բացառություն չէ նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝ որ-պես նորմատիվ իրավական ակտ գոյությունը ՀՀ իրավական համակարգում՝ ընդհանրապես և իրավունքի համակարգում՝ մասնավորապես: Ընդ որում՝ Օրենքի կարգավորումների էությունը և բովանդակությունը պետք է համապատասխանեն քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող դրական պարտավորական հարաբերությունների էությանն ու տրամաբանությանը՝ այդ թվում նաև պարտավորական իրավունքից բխող պատասխանատվության մասով:

Այս գաղափարի հիման վրա էլ Օրենքի 3-րդ հոդվածում նախատեսվել են Օրենքի նպատակը, գնումների և գնումների գործընթացի սկզբունքները: Այսպես, Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նշվում է, որ գնումների գործընթացը հիմնվում է պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքի վրա: Սա նշանակում է, որ Օրենքի շրջա-նակներում առկա մյուս բոլոր իրավական կառուցակարգերը/կարգավորումները՝ այդ թվում մասնակիցների համար առաջացող բացասական հետևանքները պետք է կառուցվեն այս և հիշատակված հոդվածում առկա մյուս սկզբունքների վրա:

Ինչու՞: Այն պարզ պատճառով, որ եթե մասնակցի ցանկացած գործողություն Օ-րենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի իմաստով մեկնաբանվի որ-պես գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում, որի դեպքում վրա կհասնեն Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ և 32-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հետևանքները, ապա կնշանակի, որ գնումների գործընթացը հիմնվում է ոչ թե պայմա-նագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքի, այլ ընդհակառակը՝ մասնակիցների շրջանակի սահմանափակման և նրանց միջև մրցակցության չխրախուսման սկզբունքի վրա, իսկ Օրենքի նպատակն էլ կդառնա մասնակիցներին պատասխանատվության ենթարկելը: Այսինքն՝ այն կվերածվի վարչաիրավական հարաբերության: Մինչդեռ, քաղաքա-ցիական օրենսդրությունը (ինչպես արդեն նշվեց, գնումների գործընթացում առաջացող իրավահարաբերությունները մաքուր քաղաքացիաիրավական հարաբերություններ են) ուղղված է առաջին հերթին տնտեսական շրջանառության հարաշարժության (դինամիկայի) ապահովմանը, իսկ

քաղաքացիաիրավական առումով սուբյեկտներին պատասխանատվության ենթարկելը վրա է հասնում միայն այն դեպքում, երբ նրանց գործողությունները խոչընդոտում են տնտեսական շրջանառության դինամիկ զարգացմանը՝ այսինքն խախտում են պատվիրատուի իրավունքներն ու օրինական շահերը:

Ուստի, վեճի առարկայի վերաբերյալ օբյեկտիվ և համապարփակ պատասխան ստանալու համար առաջարկում ենք այս երկու հանգամանքների (գաղափարների) շրջանակներում դիտարկել այն հարցը, թե ի՞նչ պետք է հասկանալ «խախտել է գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատ-վիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը» ձևակերպման ներքո, որպեսզի խուսափենք այնպիսի դատողություններից, որոնք կհակասեն Օրենքի 3-րդ հոդվածում ամրագրված նպատակին և սկզբունքին:

Այսպես, եթե Օրենքի շրջանակներում «հետախուզում» հայտարարենք «խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցու-թյան դադարեցմանը» ձևակերպման նկատմամբ, ապա կարձանագրենք, որ օրենսդիրն այս ձևակերպումն օգտագործել է ընդամենը երկու անգամ, այն է՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում և 32-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետում: Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետում սահմանվել է՝ «Եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում»:

Սույն գործում առկա վեճի առարկայով պայմանավորված՝ մեզ անհրաժեշտ է բա-ցահայտել, թե ինչ ասել է մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը՝ փոխկապակցված Օրենքով նախատեսված համապատասխան կարգավորումների հետ:

Ինչպես տեսնում ենք, Կարգի շրջանակներում «հրավերով նախատեսված փաս-տաթղթերը» տարանջատվել են «որակավորման ապահովումից»: Այսինքն՝ որակավոր-ման ապահովում չներկայացնելը Կարգում դիտարկվում է որպես գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում: Այս կարգավորումը գործում է այն դեպքում, երբ

անձն ընտրված մասնակից ճանաչվելուց հետո Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում չի ներկայացնում որակավորման ապահովում: Միևնույն ժամանակ, ընտրված մասնակցի կողմից որակավորման ապահովում չներկայացնելն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի իմաստով դիտարկվում է որպես մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախ-տում:

Ամբողջ խնդիրն այն է, որ Կարգն իրավաբանական տեխնիկայի տեսանկյունից մեկ կետի կամ ենթակետի շրջանակներում չի սահմանում, թե ո՞ր դեպքում և ո՞ր փաս-տաթղթերի չտրամադրումն է համարվում մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում: Սա նշանակում է, որ այդ դեպքերը և փաս-տաթղթերի «ցանկը» պետք է վեր հանել Օրենքի և Կարգի համակարգային և տրամա-բանական մեկնաբանման միջոցով՝ վերը նշված երկու գաղափարների լույսի ներքո:

Բացի այդ պետք է նկատի ունենալ, որ Կարգի 41-րդ կետի համաձայն՝ հայտերի բացումից հետո հայտնաբերված անհամապատասխանությունների համար շտկում պա-հանջելը և մասնակցի կողմից դրանք ոչ ամբողջական շտկելն ամենևին չպետք է նշանակի մասնակցի կողմից ստանձնած պարտավորության խախտում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի իմաստով: Իհարկե, այս մասին ներքո-շարադրյալում կխոսենք: Այժմ պետք է ստանալ այն հարցի պատասխանը, թե որ փաստաթղթերի չտրամադրումն է մասնակցի կողմից համարվում ստանձնած պարտա-վորության խախտում:

Հարցի պատասխանը ստանալու համար ելակետային կարգավորումը նախատես-ված է Օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ մասով, ըստ որի՝ «Հրավերով սահմանվում են մաս-նակցի՝ տվյալ գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորումը գնահատելու չա-փանիշները, կարգը և դրա համար պահանջվող փաստաթղթերին (տեղեկություններին) ներկայացվող պահանջները»:

Հիշյալ կարգավորումից հետևում է, որ Օրենքի իմաստով «գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտման» և «սահմանված փաստաթղթերի չներկա-յացման» դեպքերից և փաստաթղթերից մեկը վերաբերում է որակավորման համար պա-հանջվող փաստաթղթերին (որակավորման չափանիշները նախատեսված են Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով):

Այս կարգավորումը գործում էր մինչև 2019թ. նոյեմբերի 2-ը: Մասնավորապես, Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետով նախատեսված էր, որ՝ «Եթե մասնակցի՝ հրավե-րով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավոր-ման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում

են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ ա-ռաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի»: Այս դեպքում արդեն մասնակիցը կարող էր ներառվել համապատասխան ցուցակում: Նշված դրույթը Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված կարգավորման հետևանք էր, որ (խոսքը վերաբերում է Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետին) գործում է մինչ օրս, ըստ որի՝ «Հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝ գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)»:

Սակայն, 2019թ. նոյեմբերի 2-ին ուժի մեջ մտավ 2019թ. հոկտեմբերի 10-ին ըն-դունված «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հան-րապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի 16-ի N 1454-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության N 1422 որոշումը , որով ՀՀ կառավա-րության 2017թ. մայիսի 4-ի՝ «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստա-տելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգում կատարվեցին մի շարք փոփոխություններ և լրա-ցումներ: Ի լրումն այդ փոփոխությունների և լրացումների՝ Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» ենթակետով նախատեսվեց որակավորման ապահովման ինստիտուտը և այդ պահից սկսած՝ իրավակիրառ պրակտիկան ընթանում է այն ուղղությամբ, որ պատվիրատուն հրավերով այլևս որակավորման չափանիշների և համապատասխան փաստաթղթերի ներկայացման պահանջ չի կարող նախատեսել: Հետևաբար՝ այս փոփոխություններից հետո Օրենքի իմաստով արդեն որակավորման ապահովում չներկայացնելը դիտարկվում է որպես մասնակցի կողմից ստանձնած պարտավորության խախտում, որը հիմք է մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ասվածն ուղղակիորեն բխում է Կարգով նախատեսված կարգավորումներից: Մասնավորապես, Կարգի 59-րդ կետով հստակ սահմանվում է, որ՝ «Մասնակիցների՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝ 1) եթե մասնակիցը հայտով ներկայացրել է օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին. 2) բացի հայտարարությունից, օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել»: Եթե ավելի պարզ, ապա այս կարգավորմամբ հստակ ասվում է, որ որակավորման ապահովում ներկայացնելու դեպքում, մասնակցից այլևս, օրինակ, տեխնիկական միջոցների կամ աշխատանքային ռեսուրսների վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի կարող պահանջվել:

Կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում Կարգի 32-րդ կետի 19-րդ կետը շարադրվեց հետևյալ կերպ՝ «Եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կար-գով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պար-տավորության խախտում»: Հարց է առաջանում՝ որակավորման ապահովումից բացի Օ-րենքի իմաստով էլ ո՞ր փաստաթղթերի չտրամադրումն է համարվում գնման գործընթա-ցում մասնակցի կողից ստանձնած պարտավորության խախտում: Իսկ ինչու՞ Օրենքի իմաստով:

Առաջին՝ այն պատճառով, որ Կարգում թվարկվում է, թե մասնակիցը հայտով ինչ է ներկայացնում, սակայն որևէ տեղ չի բացահայտում՝ որոնք են համարվում ստանձնած պարտավորության խախտում՝ բացառությամբ որակավորման ապահովման, որը Կարգի իմաստով ուղղակիորեն համարվում է որպես Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորության խախտում:

Երկրորդ՝ եթե մենք փորձենք այս հարցի պատասխանը ստանալ Կարգի միջոցով, ապա դարձյալ խնդիր ենք ունենալու ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքի հետ: Բացի այդ, չենք կարողանալու տարանջատել, թե որ դեպքում է մասնակցի հայտն անբավարար գնահատվում և մերժվում, որի հետևանքը լինում

է նրան համապատասխան ցուցակում ներառելը, և որ դեպքում է պարզապես մասնակցի հայտն անբավարար գնահատվում և մերժվում:

Երրորդ՝ եթե մասնակցի ցանկացած գործողություն որակվի որպես գնման գործ-ընթացում ստանձնած պարտավորության խախտում՝ կնշանակի, որ Կարգով նախա-տեսված կարգավորումները հակասում են պարտավորական հարաբերությունների էությանը և Օրենքի 3-րդ հոդվածով նախատեսված նպատակին և սկզբունքին (պայմա-նագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում), կամ կնշանակի՝ կոլիզիա է առաջանում Կարգի և Օրենքի միջև, որի դեպքում արդեն նախապատվությունը պետք է տրվի Օրենքով նախատեսված կարգավորումներին:

Չորրորդ՝ որպես վերը նշված երեք կետերի ամփոփում՝ հարկ է դիտարկել Կարգի համապատասխան կարգավորումները՝ փոխկապակցված Օրենքի դրույթների հետ:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ «[...] հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայաց-ված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի»:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ «Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձա-նագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տե-ղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծա-նուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանու-թյունները»:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ «Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի

«ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը»:

Վկայակոչված կարգավորումներից բխում է, որ նախատեսված է երկու կանոն/կարգավորում: Առաջին կանոն՝ հանձնաժողովը հայտն ընդամենը գնահատում է անբա-վարար և մերժում է, եթե գնային առաջարկը բացակայում է կամ այն ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան: Այլ բացասական հետևանք նախատես-ված չէ: Մասնավորապես, այն Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի իմաստով չի համարվում սահմանված փաստաթղթերի չտրամադրում, իսկ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի իմաստով՝ գնման գործընթացում ստանձնած պար-տավորության խախտում: Հետևաբար՝ տվյալ մասնակիցը չի կարող ներառվել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Երկրորդ կանոն՝ հանձնաժողովը մասնակցին թույլ է տալիս սահմանված ժամկե-տում շտկելու արձանագրված անհամապատասխանությունները: Եթե չի շտկում, ապա հետևանքը դարձյալ պետք է լինի այն, որ ընդամենը հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի: Եթե մենք օգտագործենք իրավանորմի մեկնաբանման «Reductio ad absur-dum» (բառացի թարգմանած՝ աբսուրդի հասցնելը) և կատարենք դատողություն առ այն, որ վերջին դեպքը Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի իմաստով համարվում է փաս-տաթղթի չտրամադրում կամ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակե-տի իմաստով՝ մասնակցի կողմից գնման գործընթացում ստանձնած պար-տավորության խախտում, ապա մենք չենք կարողանալու հասկանալ, թե ինչ ասել է քա-ղաքացիաիրավական իմաստով պարտավորության բովանդակություն և պարտավորության խախտման համար պատասխանատվություն: Ընդ որում՝ շեշտում ենք՝ Օրենքը «օգտագործում է գնման գործընթացում ստանձնած պարտավորության», այլ ոչ թե՝ «պարտականության խախտում» արտահայտությունը: Այս դիտարկումը չափազանց կարևոր է, քանի որ գործ ունենք քաղաքացիաիրավական/պարտավորական հարաբերության հետ: Իսկ քաղաքացիաիրավական իմաստով սուբյեկտը ենթարկվում է պատասխանատվության միայն ծագած, այդ պարտավորության ներսում առկա պար-տականությունը չկատարելու դեպքում: Այսինքն՝ պարտավորության ներսում պարտականության չկատարում, որը խախտում է մյուս կողմի իրավունքներն ու օրի-նական շահերը:

Ասվածի տրամաբանությունն առկա է նաև Կարգի 45-րդ կետով նախատեսված կարգավորման մեջ, որը (Կարգի 45-րդ կետը) հղում է անում բացառապես Օրենքի 6-րդ

հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին, ինչը նշանակում է, որ անհամապատասխա-նությունները չշտկելը չի համարվում ո՛չ փաստաթղթի չտրամադրում, ո՛չ էլ ստանձնած պարտավորության խախտում: Հետևաբար՝ անհամապատասխանության չշտկումը չի կազմում գնման գործընթացում մասնակցի կողմից ստանձնած պարտավորության բովանդակությունը, քանի որ մասնակցի և պատվիրատուի միջև, անգամ Օրենքի ուժով, դեռևս պարտավորական հարաբերություններ չեն ծագել, որոնց ներսում մասնակից կողմից առկա պարտականություններից մեկի չկատարումը կհանգեցներ պատվիրատուի իրավունքների խախտմանը:

Այս դատողությունն առավել ակնհայտ է դառնում, երբ խնդիրը դիտարկում ենք Օրենքի շրջանակներում: Մասնավորապես, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետն ունի հետևյալ բովանդակությունը՝ «[…] խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը»: Այստեղից բխում է, որ մասնակցի համար համապատասխան պարտավորությունները ծագում են (1) պատվիրատուի հետ կնքած պայմանագրով և (2) գնման գործընթացի շրջանակներում՝ նախքան պայմանագրի կնքումը: Օրենքի իմաստով՝ վերջինի դրսևորումը հետևյալն է՝ մասնակիցը ստանձնում է պարտավորություն՝ կրել պայմանագրի ապահովումը (փաստաթուղթը) ներկայացնելու պարտականություն: Այսինքն՝ Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի իմաստով փաստաթուղթ է համարվում պայմանագրի ապահովումը կամ վերջինիս հավասարեցված այն փաստաթղթերը, որոնք մասնակիցը պետք է ներկայացնի նախքան պայմանագիրը կնքելը, որոնց ներկայացման պարտականության համար Օրենքով արդեն ստանձնել է պարտավո-րություն և որոնց չներկայացումը կհանգեցնի պատվիրատուի իրավունքների և օրինական շահերի խախտմանը:

Եթե հրաժարվենք այս մեկնաբանությունից և մասնակցի կողմից անհամապա-տասխանությունն ամբողջությամբ չշտկելը դիտարկենք որպես Կարգի իմաստով փաս-տաթղթի չտրամադրում կամ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի իմաստով՝ գնման գործընթացում նրա կողմից ստանձնած պար-տավորության խախտում, ապա մենք ուղղակիորեն խնդիր ենք ունենալու նաև ՀՀ Սահ-մանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության և 79-րդ հոդվածով սահմանված որոշակիության սկզբունքների հետ:

Մասնավորապես, կստացվի՝ գնային առաջարկ չներկայացնելու դեպքում հայտն ընդամենը մերժվում է և չի համարվում որպես գնման գործընթացում ստանձնած պարտավորության խախտում, իսկ անհամապատասխանությունը չշտկելը որակվում է որպես պարտավորության խախտում, և վրա է հասնում Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ և 32-րդ հոդվածով նախատեսված հետևանքները : Եթե այդպես է, ապա գնային առաջարկ չներկայացնելը կամ հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացնելը ևս պետք է համարվեր ստանձնած պարտավորության խախտում: Մինչդեռ, այդպես չէ, քանի որ գնային առաջարկ ներկայացնելը ևս չի համարվում ստանձնած պարտավորություն, ինչպես որ անհամապատասխանությունը չշտկելը կամ ամբողջական չշտկելը: Համապատասխան գնային առաջարկ ներկայացնելը կամ անհամապատասխանությունները շտկելն ընդամենն այն պայմաններն են, որոնց պահպանման դեպքում հայտը կգնահատվի բավարար: Այսինքն՝ հայտը բավարար գնահատելու համար Օրենքով՝ այդ թվում հրավերով սահմանված պայմանները և գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունները չպետք է նույնացվեն միմյանց հետ. դրանք բոլորովին տարբեր իրավական երևույթներ են:

Իսկ եթե շարժվենք մեր կողմից տրված մեկնաբանությամբ՝ նրա հիմքում համաչափության և որոշակիության սկզբունքը դնելով որպես մեկնաբանմանն ուղղորդող ելակետային դրույթներ (գաղափարներ), ապա կատարելու ենք դատողություն առ այն, որ անհամապատասխանությունը չշտկելը կամ ամբողջական չշտկելը չի համարվում որպես ստանձնած պարտավորության խախտում, քանի որ մասնակցի և պատվիրատուի միջև դեռևս չկա ծագած պարտավորություն, որի բովանդակության տարրերից մեկն էլ կկազ-մեր անհամապատասխանությունները շտկելը:

Եթե տանք այլ մեկնաբանություն, ապա հարց է առաջանալու՝ որտեղ մնաց պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը և Օրենքի նպատակը: Պատկերացնենք նախահաշվային գինը 3 000 000 000 ՀՀ դրամ է: Ո՞վ կմասնակցի, եթե իմանա, որ սխալ շտկելու դեպքում իր նկատմամբ կիրառվելու է Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով նա-խատեսված հետևանքը: Ավելին, եթե չշտկումը կամ ոչ ամբողջական շտկումը դիտվի որպես ստանձնած պարտավորության խախտում, ապա կստացվի, որ օրենսդրի նպատակն է յուրաքանչյուր գնման գործընթացի շրջանակներում «նպաստել» նոր իրավաբանական անձանց հիմնադրմանը, քանի որ որոշները հայտնվել են համապատասխան ցուցակում երկու տարի ժամկետով:

Հետևաբար, եթե սույն վեճի առարկայի շրջանակներում Օրենքով նախատեսված կարգավորումներին մոտենանք վերոշարադրյալ գաղափարների լույսի ներքո, ապա Օ-րենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված՝ «խախտել է գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունը» կարգավորման վերաբերյալ կստանանք հետևյալ պատկերը:

Մասնավորապես, Օրենքի իմաստով ստանձնած պարտավորության խախտում կարող են համարվել Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում պայ-մանագրի ապահովում չներկայացնելը, Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն որակավորման ապահովում չներկայացնելը և Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի համաձայն համապատասխան կայքին հղում չկատարելը կամ հայտարարագիր չներկայացնելը: Այս վերջին դեպքում, եթե պատվի-րատուն պահանջի շտկում, իսկ մասնակիցը չկատարի այդ շտկումը, ապա այն Օրենքի ուժով կդիտվի որպես ստանձնած պարտավարության խախտում: Այլ կերպ ասած՝ սրանք այն դեպքերն են, որոնց համար մասնակիցը ստանձնում է պարտավորություն, այն է՝ անհրաժեշտության դեպքում կրում է այդ փաստաթղթերը (տեղեկությունները) ներկայացնելու պարտականություն, որը կազմում է նրա և պատվիրատուի միջև Օրենքով ծագած պարտավորության բովանդակությունը:

Այսպիսով, ընդհանրացնելով վեճի առարկան և հարցը՝ հանգում ենք հետևյալին.

- վեճի առարկա՝ արդյո՞ք գործում առկա փաստական հանգամանքների համա-տեքստում Մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանություններն ամբող-ջությամբ չշտկելը հիմք է Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար.

- պատասխան՝ սույն գործում առկա փաստական տվյալների համատեքստում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանություններն ամբողջությամբ չշտկելը չի համարվում Մասնակցի կողմից գնման գործընթացի շրջա-նակներում ստանձնած պարտավորության խախտում: Չշտկման հետևանքը մեկն է՝ հայտը գնահատել անբավարար և մերժել: Հետևաբար՝ առկա չէ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմք.

- հարց՝ առկա իրավակարգավորման պայմաններում ո՞ր դեպքում Մասնակիցը կարող է ներառվել գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցա-կում.

- պատասխան՝ սույն գործով Մասնակիցը կարող է ներառվել համապատասխան ցուցակում, եթե խախտած լինի Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 28-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի «բ» ենթակետի պահանջները:

2.1 Վեճի առարկա և հարց.

- վեճի առարկա՝ արդյո՞ք մասնակիցը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե պատ-վիրատուն Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված հայտերի գնահատման ժամկետի խախտումից հետո է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը (մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջա-նակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը) ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալներն ուղարկում լիազորված մարմին:

- հարց՝ առկա իրավակարգավորման պայմաններում պատվիրատուն ի՞նչ ժամկե-տում պետք է գնահատի հայտերը, և ի՞նչ հետևանքներ կարող է առաջանալ պատվիրա-տուի և գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտած մասնակցի համար, եթե պատվիրատուն խախտում է հայտերի գնահատման ժամկետը:

2.2 Իրավական հիմքեր և հիմնավորումներ.

Ինչպես արդեն նշվեց վերոգրյալում, գնման գործընթացի շրջանակներում առաջացող հարաբերությունները քաղաքացիաիրավական հարաբերություններ են, իսկ այդ հարաբերությունները կարգավորող Օրենքի և Կարգի դրույթները պետք է մեկնաբանել քաղաքացիական իրավունքի էությանն ու բովանդակությանը համապատասխան: Արձանագրվեց նաև, որ պատվիրատուն կարող է օգտվել պայմա-նագրի ազատությանից՝ իր և մասնակիցների համար հրավերով սահմանելով այնպիսի պայմաններ, որոնք օրենսդրությամբ նախատեսված չեն, բայց չեն էլ հակասում Օրենքի 3-րդ հոդվածում ամրագրված նպատակին և սկզբունքներին կամ իր և մասնակիցների համար փոփոխել օրենսդրությամբ սահմանված պայմանները, որոնց (փոփոխման) հնարավորությունը նախատեսված է իրավական ակտով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ գնման գործընթացի կազմակերպման և պայմանագրի պայմանները նախատեսված են օրենքով կամ այլ իրավական ակտերով, որոնց փոփոխման հնարավորություն նախատեսված չէ: Ամեն դեպքում, անկախ նրանից՝ պատվիրատուի և մասնակիցների համար գնման գործընթացի պայմաններն ուղղակի սահմանված են օրենքով կամ այլ իրավական ակտերով, թե՝ սահմանվել են հրավերով, որոնց (սահմանման) հնարավորությունն օրենսդրությունը թույլ է

տալիս, երկու կողմերն էլ պարտավոր են անշեղորեն պահպանել: Իրավաչափ է, որ այդ պահանջներին չհետևելը պետք է բացասական հետևանք առաջացնի ոչ միայն մասնակցի, եթե նա չի պահպանում այդ պահանջները, այլ նաև այդ պահանջները չպահպանող պատվիրատուի համար:

Դիրքորոշման այս հատվածում քննարկելու ենք Կարգով նախատեսված կարգավորում, որով սահմանված պայմանի չպահպանումը պատվիրատուի համար պետք է առաջացնի անբարենպաստ իրավական հետևանք:

Այսպես, Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ «[. . .] հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում» :

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթա-ցին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացա-կարգ»:

Հիշյալ երկու կետերով նախատեսված ժամկետները և՛ իմպերատիվ են, և՛ իրավադադարեցնող: Իմպերատիվ են այն առումով, որ հրավերով հայտերի գնահատման, իսկ խախտման հայտնաբերման համար պատվիրատուի կողմից այլ ժամկետ չի կարող նախատեսվել: Ընդ որում՝ ինչպես նկատում ենք, Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված ժամկետի հաշվարկի սկիզբ է համարվում հայտերի բացման օրը, իսկ Կարգի 45-րդ կետով նախատեսված ժամկետի հաշվարկը սկսում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից:

Իրավադադարեցնող են հետևյալ երկու առումներով:

Առաջին, հայտերի գնահատման ժամանակ այս երկու կետերով նախատեսված ժամկետները կարգավորող դրույթների միջև առկա է կառուցվածքագործառութային կապ: Մասնավորապես, եթե խոսքը վերաբերում է հայտերի գնահատմանը, ապա պատ-վիրատուն կարող է Կարգի 45-րդ հոդվածով նախատեսված ժամկետում իրացնել իր սու-բյեկտիվ

իրավունքը միայն այն դեպքում, երբ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտումը (մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ներքոշարադ-ոյալում այսուհետ՝ Խախտում) հայտնաբերում է հայտերի գնահատման ժամկետի ընթացքում: Եթե պատվիրատուն Խախտումը հայտնաբերում է հայտերի գնահատման համար Կարգով սահմանված ժամկետից հետո, այսինքն՝ խախտում է հայտերի գնահատման համար Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով նախատեսված իմ-պերատիվ ժամկետը (կանոնը), նշանակում է, որ նրա համար ևս պետք է գնման գործ-ընթացի շրջանակներում առաջանան բացասական հետևանքներ:

Ինչու՞: Այն պատճառով, որ նա օրենքի/ենթաօրենսդրական ակտի ուժով ստանձնել է սահմանված ժամկետում հայտերը գնահատելու պարտականություն: Ավելին, միանգամայն անտրամաբանական կլինի, եթե գնումների գործընթացը կարգավորող օրենսդրության շրջանակներում խոսվի միայն մասնակիցների համար առաջացող բացասական հետևանքների մասին: Իսկ այդ դեպքում ո՞րն է լինելու պատվիրատուի համար բացասական հետևանքը: Առաջացող հետևանքը պետք է ծագի պատվիրատուի և մասնակցի միջև, իսկ այդ հետևանքը լինելու է այն, որ եթե պատվիրատուն խախտում է հայտերի գնահատման համար սահմանված ժամկետը և Խախտումը հայտնաբերում է այդ ժամկետից հետո, ապա պատվիրատուն զրկվում է Կարգի 45-րդ կետով նախատեսված ժամկետում այդ նույն կետով սահմանված իր սուբյեկտիվ իրավունքը (մասնակցի վերաբերյալ տվյալները լիազոր մարմին ուղարկելու) իրացնելու հնարավորությունից: Իսկ եթե պատվիրատուն մասնակցի տվյալներն ուղարկել է լիազորված մարմնին, ապա վերջինս պետք է մերժի համապատասխան ընթացակարգ սկսելը (եթե օրենքով ունի այդպիսի լիազորություն), իսկ եթե չունի և սկսում է համապատասխան ընթացակարգ, ապա բողոքներ քննող անձը պետք է կայացնի լիազոր մարմնի նախաձեռնած ընթացակարգը մերժելու մասին որոշում:

Եթե նույնիսկ այս մեկնաբանության նկատմամբ մենք ինքներս հանդես գանք որ-պես ամենախիստ ընդդիմախոս, միևնույն է՝ պետք է արձանագրենք, որ քաղաքացիա-իրավական հարաբերությունների տեսանկյունից այս կերպ մեկնաբանությունը դա-սագրքային ճշմարտություն է, որն առավել հիմնավորման կարիք չունի: Իսկ այս մասով մասնակցի համար ի՞նչ բացասական հետևանք կարող է առաջանալ: Հետևանքը լինելու է այն, որ նրա հայտն ընդամենը գնահատվելու է անբավարար և մերժվելու է:

Երկրորդ՝ Կարգի 45-րդ կետով նախատեսված ժամկետն իրավադադարեցնող է հետևյալ պատճառաբանությամբ: Եթե Խախտումը հայտնաբերվում է հայտերի գնա-հատման

ժամկետի ընթացքում, սակայն պատվիրատուն Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետի խախտմամբ է մասնակցի տվյալներն ուղարկում լիազորված մարմնին, ապա հետևանքը դարձյալ լինելու է այն, որ համապատասխան ընթացակարգ չի կարող սկսվել, իսկ սկսվելու դեպքում բողոքներ քննող անձը պետք է կայացնի ընթացակարգը մերժելու մասին որոշում: Քանի որ վերջին դեպքը դուրս է գտնվում սույն գործով առկա վեճի առարկայի շրջանակներից, ուստի առաջարկում ենք այդ մասով այսքանով սահմանափակվել:

2.3 Դիրքորոշման ՄԱՍ Ե.-ի 2.2 կետում շարադրված մեկնաբանության կիրառելիությունը սույն գործով առկա փաստերի նկատմամբ.

Եթե խիստ պայմանական ընդունենք, որ սույն գործով ունենք Մասնակցի կողմից թույլ տրված Խախտում, ապա այն պետք է հանգուցալուծվի հետևյալ կերպ:

Դիրքորոշման ՄԱՍ Ա.-ում փաստական հանգամանքները շարադրելիս՝ արձա-նագրեցինք, որ Պատվիրատուն Մրցույթի հայտարարության մեջ նշել է, որ մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մինչև 2022թ. հունվարի 17-ը՝ ժամը 11:00-ը:

2022թ. հունվարի 17-ին՝ ժամը 11:00-ին, տեղի է ունեցել գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը: 2022թ. հունվարի 17-ի N 2.1 արձանագրության 1.1 կետի «գ» ենթակետի համաձայն՝ գնման ընթացակարգի հայտերը բացվել են 2022թ. հունվարի 17-ը՝ ժամը 11:00-ը: N 2.1 արձանագրության 2.1 կետում նշվել է՝ «Ներկայացված հայտերն ուսումնասիրելու նպատակով հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել սույն ամսաթվից հաշված (ընդ. մերն է) մինչև տասն աշխատանքային օրվա ընթացքում»: Այսինքն՝ Պատվիրատուն հստակ արձանագրել է, որ տաս աշխատանքային օրվա հաշվարկը պետք է սկսեր՝ 2022թ. հունվարի 17-ը համարելով որպես այդ հաշվարկի մեջ առաջին աշխատանքային օր: Հաշվի առնելով, որ 2022թ. հունվարի 27-ը և 28-ը եղել են ոչ աշխատանքային օրեր, ապա տասը աշխատանքային օրը լրանում էր 2022թ. փետրվարի 1-ին:

2022թ. հունվարի 31-ին՝ ժամը 17:00-ին, տեղի է ունեցել գնահատող հանձնաժո-ղովի նիստը: Գնահատող հանձնաժողովը 2022թ. հունվարի 31-ի N 2-2 արձա-նագրության 1.1 կետով Մասնակցի մասով արձանագրել է անհամապատասխանություններ: N 2-2 արձանագրության 2.1 կետով որոշել է կասեցնել նիստը և ծանուցել 1.1 կետում նշված մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ըն-թացքում (մինչև 01.02.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանու-թյունները:

N 2-2 արձանագրության 2.1 կետում նշվել է՝ «Գնման ընթացակարգի հանձնաժո-ղովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունները մաս-նակիցների կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 02.02.2022թ.՝ ժամը 16:00-ին»: Մասնակիցը շտկումները ներկայացրել է սահմանված ժամկետում:

Մասնակիցը 2022թ. փետրվարի 2-ին ստացել է Պատվիրատուի գնահատող հանձնաժողովի 2022թ. փետրվարի 2-ի՝ ժամը 16:00-ի նիստի N 2-3 արձանագրությունը, որի 1-ին կետում նշել է՝ «Գնահատող հանձնաժողովը որոշեց 31.01.2022թ. N 2-2 արձա-նագրության 2.1 կետում նշված «02.02.2022թ.» թիվը փոխարինել «04.02.2022թ.» թվով»:

Գնահատող հանձնաժողովը 2022թ. փետրվարի 4-ի՝ ժամը 16:00-ի նիստի N 2-4 արձանագրության 1.1 կետում նշել է՝ «Ընդունել ի գիտություն, որ ներկայացված փաս-տաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանու-թյունների մասին 31.01.2022թ. ծանուցվել է […] «Էնջինիրինգ» ՓԲԸ-ին՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, որոնք ընկերությունների կողմից ամբողջությամբ չեն շտկվել […]»:

Պատվիրատուն, հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը, 2022թ. փետրվարի 10-ին թիվ 02/16.4/1197-2022 գրությամբ Մասնակցի տվյալներն ուղարկել է Լիազորված մարմին:

Լիազորված մարմինը 2022թ. փետրվարի 17-ին թիվ 26/26-1/2822-2022 գրու-թյամբ Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնա-կիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Ստացվում է հետևյալը: Պատվիրատուն պարտավոր էր հայտերը գնահատել հայ-տերի բացման օրվանից, այն է՝ 2022թ. հունվարի 17-ից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում, որը լրանում էր 2022թ. փետրվարի 1-ին: Սակայն Պատվիրատուն խախտել է Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով նախատեսված իրավադադարեցնող ժամկետը (դեռևս 2022թ. փետրվարի 4-ին հայտերը գնահատված չեն եղել), ինչը նշանակում է, որ վերը նշված կարգավորումների և տրված մեկնաբանության լույսի ներքո Պատվիրատուն զրկվել է Կարգի 45-րդ հոդվածով սահմանված իր սուբյեկտիվ իրավունքն իրացնելու հնարավորությունից: Քանի որ սույն գործով Լիազորված մարմինը մերժելու փոխարեն նախաձեռնել է համապատասխան ընթացակարգ, ուստի Բողոքներ քննող անձը, մեր կարծիքով, պետք է կայացնի ընթացակարգը մերժելու մասին որոշում:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալը՝ հանգում ենք հետևյալին.

- վեճի առարկա՝ արդյո՞ք մասնակիցը կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե պատ-վիրատուն Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված հայտերի գնահատման ժամկետի խախտումից հետո է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը (մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանա-կում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մաս-նակցի հետագա մասնակցության դադարեցմանը) ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալներն ուղարկում լիազորված մար-մին.

- պատասխան՝ մասնակիցը չի կարող ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե պատվիրատուն Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախ-տումը հայտնաբերել է Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված հայտերի գնահատման ժամկետի խախտմամբ:

- հարց՝ առկա իրավակարգավորման պայմաններում պատվիրատուն ի՞նչ ժամկե-տում պետք է գնահատի հայտերը, և ի՞նչ հետևանքներ կարող է առաջանալ պատվիրա-տուի և գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտած մասնակցի համար, եթե պատվիրատուն խախտում է հայտերի գնահատման ժամկետը.

- պատասխան՝ եթե պատվիրատուն խախտում է հայտերի գնահատման համար սահմանված ժամկետը և Խախտումը հայտնաբերում է այդ ժամկետից հետո, ապա պատ-վիրատուն զրկվում է Կարգի 45-րդ կետով նախատեսված ժամկետում այդ նույն կետով սահմանված իր սուբյեկտիվ իրավունքը (մասնակցի վերաբերյալ տվյալները լիազոր մարմին ուղարկելու) իրացնելու հնարավորությունից: Իսկ եթե պատվիրատուն մասնակ-ցի տվյալներն ուղարկել է լիազորված մարմնին, ապա վերջինս պետք է մերժի համապա-տասխան ընթացակարգ սկսելը, իսկ եթե սկսում է համապատասխան ընթացակարգ, ապա բողոքներ քննող անձը պետք է կայացնի լիազոր մարմնի նախաձեռնած ընթացա-կարգը մերժելու մասին որոշում:»:

Ելնելով վերոգրյալից՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է մերժել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Մասնակցին ներառելու նպատակով լիազորված մարմնի՝ 2022թ.-ի փետրվարի 17-ին նախաձեռնած ՍՑ-ԼՕ-2022/77 ընթացակարգը:

4. <u>ՍՑ-LO-2022/77 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 07.12.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), իսկ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 17.01.2022թ.-ին:

ii. Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ գնման գործընթացն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված 6-րդ մասի համաձայն:

iii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել նաև «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ն, «Էնջինիրինգ» ՓԲԸ, «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ն և «Երվադա» ՍՊԸ-ն:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 31.01.2022թ.-ի նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ «Էնջինիրինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված.

1. Հավելված 1.2-ի մասով՝

ա) 1-2 տողերով ներկայացված է մեկից ավելի արտադրող, իսկ մոդելը գտնել չի հաջողվել,

բ) 127-134, 136, 138-141 տողերում ներկայացված է մեկից ավելի արտադրող և ներկայացված մոդելները չեն համապատասխանում հրավերի պահանջներին,

գ) ներկայացված չեն մոդելներ հետևյալ տողերում՝ 18-103, 119-120, 123՝ նշվածը չի հանդիսանում մոդել,

դ) ներկայացված չէ արտադրող հետևյալ տողերում՝ 104-109՝ նշվածը հանդիսանում է մոդել,

ե) 1-109,119-125, 127-141 տողերով ներկայացված չեն տեխնիկական բնութագրեր:

2. Ներկայացված չէ ծավալաթերթ-նախահաշիվը:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել ծանուցումը

ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (01.02.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Նույն արձանագրության 2.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է հաջորդ նիստը հրավիրել 02.02.2022թ.-ին:

vii. Հանձնաժողովի 02.02.2022թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 31.01.2022թ.-ի թիվ 2-2 արձանագրության 2.1 կետում նշված «02.02.2022» թիվը փոխարինել «04.02.2022» թվով:

viii. Հանձնաժողովի 04.02.2022թ.-ի նիստի թիվ 2-4 արձանագրության համաձայն՝ «Էնջինիրինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.2 մասով չեն շտկվել՝

ա) 98-103 տողերով ներկայացված մոդելները չեն հանդիսանում հրավերով պահանջվող սարքավորման տեսակ (օդի դիմահարի կամ ծխահեռացման օդամղիչի փոխարեն այն հանդիդսանում է փական),

բ) 131-133 տողերով մոդելի փոխարեն ներկայացված է սերիա, իսկ սերիայում առկա մոդելներն առա-վելագույն տեխնիկական բնութագրով չեն համապատասխանում հրավերի պահանջներին,

գ) 127-128, 138 տողերում ներկայացված չեն մոդելներ,

դ) 136 տողում ներկայացված չէ արտադրող:

ix. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջի հիման վրա «Էնջինիրինգ» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

x. Ընթացակարգի շրջանակներում «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 08.02.2022թ.-ին ներկայացվել է բողոք, իսկ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից 17.02.2022թ.-ին ներկայացվել է համանման բողոք:

xi. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 10.03.2022թ.-ի թիվ ԳԲՔԱ-LO-2022/19 ծածկագրով կայացրած որոշման համաձայն՝ Բողոքներ քննող անձը, արձանագրել է, որ Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետի 4-րդ պարբերությամբ և Ընթացակարգի հրավերի Հավելված թիվ 1.2-ի՝ սարքերի և սարքավորումների նկարագրով մասնակցի կողմից հայտով մոդելի ներկայացման պարտադիր պահանջ սահմանված չէ, այլ նշվել է՝ «առկայության պարագայում», որպիսի պայմաններում հայտով մոդելների չներկայացնելը չի կարող ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Կարգի 41-րդ կետի համաձայն շտկման պահանջ ներկայացնելու հիմք հանդիսանալ, ըստ այդմ՝ շտկում պահանջելու արդյունքում շտկված մոդելների

անձնագրային տեխնիկական բնութագրերում կրկին անհամապատասխանություն արձանագրելը նույնպես ոչ իրավաչափ է, քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, տվյալ դեպքում, Ընկերությունների կողմից հայտով ներկայացված Հավելված թիվ 1.2-ի՝ սարքերի և սարքավորումների նկարագրի գնահատումը հրավերով սահմանված պահանջների նկատմամբ պետք է իրականացներ ներկայացված հայտերում առկա կամ բացակա մոդելների պայմաններում՝ ելնելով հրավերով սահմանված պահանջներից: Ուստի, տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտերը մերժելու մասին որոշումներ կայացնելով, գործել է ոչ իրավաչափ:

Բացի այդ, Հանձնաժողովի՝ ընկերությունների հայտերը մերժելու մասին կայացված արձանագրությունը, Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով, հստակ չի պարունակում դրանց հիմնավորումը, մասնավորապես՝ Հանձնաժողովը նշել է, որ ընկերությունների կողմից ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջներին, արտադրողը նման մոդելային շարք չունի, որոշ տողերով ներկայացված մոդելները շատ հզոր են, սակայն նույն արձանագրությամբ նշված չէ հիմնավորում այն մասին, թե նշված մոդելների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերից ինչով են տարբերվում, կամ ներկայացված մոդելների ո՞ր չափորոշիչները չեն համապատասխանում հրավերի պահանջներին, հրավերի կոնկրետ ո՞ր պահանջին չի համապատասխանում, առկա չէ կոնկրետ նկարագրություն կամ համեմատական որևէ փաստաթուղթ կատարված ուսումնասիրության մասին, որպիսի պայմաններում, Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված դրույթի խախտում: Միաժամանակ Բողոքներ քննող անձն արձանագրել է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտում, քանի որ Ընթացակարգի հրավերի հայտերի ներկայացման և բացման վերջնաժամկետ է սահմանվել 17.01.2022թ.-ին, իսկ Հանձնաժողովի կողմից ընկերությունների հայտերն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը կայացվել է Հանձնաժողովի 04.02.2022թ.-ի նիստի թիվ 2-4 արձանագրությամբ՝ տասն աշխատանքային օրվա խախտմամբ, ինչի արդյունքում, այս մասով նույնպես, ընկերությունների հայտերն անբավարար գնահատելու և մերժելու մասին Հանձնաժողովի կողմից կայացված որոշումն իրավաչափ չէ: Բողոքներ քննող անձը հարկ է համարել

փաստել, որ Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված դրույթն իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում է, որ մասնակցի կողմից ներկայացված հայտի գնահատումը հանձնաժողովն իրականացնում է հայտի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Ընդ որում՝ մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում գնահատում իրականացնելը ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականությունների կանխարգելմանը և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում այն ուղղված է իրավունքների և պարտականությունների սահմանմանն ու իրագործմանը, և վերջապես՝ հետապնդում է իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց: Վերոգրյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը որոշել է՝ «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 08.02.2022թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2022/19 ծածկագրով բողոքը և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից 17.02.2022թ.-ին ներկայացված համանման բողոքը բավարարել ամբողջությամբ՝ պարտավորեցնել «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 04.02.2022թ.-ի թիվ 2-4 արձանագրությամբ կայացված «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի հայտերն անբավարար գնահատելու և մերժելու ու գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին կայացված որոշումները:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2822-2022 գրությամբ «Էնջինիրինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ գնման ընթացակարգի արձանագրությունը գնման ձևին համապատասխան պարունակում է հայտի մերժման դեպքում՝ դրա հիմնավորումը:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու գրավոր դիմում՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը,

բ. իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր համապատասխանության մասին,

գ. ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր),

թ. «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձի դեպքում՝ հղում գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջին, իսկ այլ իրավաբանական անձանց դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցող իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր՝ «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60.3-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա սահմանված ձևով և կարգով: Ընդ որում, եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում:

Նույն կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրի նախագծում ներառվում են վերջինիս կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

Նույն կետի 21-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում: Եթե գնման ընթացակարգի չափաբաժինների քանակը գերազանցում է յոթանասունհինգ չափաբաժինը, ապա հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա

հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 07.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 4.3-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող՝ սույն հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, մոդելները (առկայության պարագայում), արտադրողները և երաշխիքային ժամկետները:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր

(տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ հայտերի գնահատումն իրականացվում է դրանց ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում, իսկ հայտերի մերժման դեպքում գնման ընթացակարգի արձանագրությունը պետք է հստակ պարունակի դրանց հիմնավորումը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 07.12.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով բաց մրցույթ հայտերի ներկայացման և հայտերի բացման վերջնաժամկետ է սահմանվել 17.01.2022թ.-ը: Հանձնաժողովի 31.01.2022թ.-ի նիստի թիվ 2-2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Էնջինիրինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.2-ի մասով՝ 1-2 տողերով ներկայացված է մեկից ավելի արտադրող, իսկ մոդելը գտնել չի հաջողվել, 127-134, 136, 138-

141 տողերում ներկայացված է մեկից ավելի արտադրող և ներկայացված մոդելները չեն համապատասխանում հրավերի պահանջներին, ներկայացված չեն մոդելներ հետևյալ տողերում՝ 18-103, 119-120, 123՝ նշվածը չի հանդիսանում մոդել, ներկայացված չէ արտադրող հետևյալ տողերում՝ 104-109՝ նշվածը հանդիսանում է մոդել, 1-109,119-125, 127-141 տողերով ներկայացված չեն տեխնիկական բնութագրեր, ինչպես նաև ներկայացված չէ ծավալաթերթ-նախահաշիվը, ինչով պայմանվորված որոշում է կայացվել մեկ աշխատանքային օրով նիստը կասեցնել և մասնակիցներին առաջարկել ծանուցումը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում (01.02.2022թ. ներառյալ) շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հանձնաժողովի 04.02.2022թ.-ի նիստի թիվ 2-4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Էնջինիրինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.2 մասով չեն շտկվել 98-103 տողերով ներկայացված մոդելները չեն հանդիսանում հրավերով պահանջվող սարքավորման տեսակ (օդի դիմահարի կամ ծխահեռացման օդամղիչի փոխարեն այն հանդիդսանում է փական), 131-133 տողերով մոդելի փոխարեն ներկայացված է սերիա, իսկ սերիայում առկա մոդելներն առա-վելագույն տեխնիկական բնութագրով չեն համապատասխանում հրավերի պահանջներին, 127-128, 138 տողերում ներկայացված չեն մոդելներ, 136 տողում ներկայացված չէ արտադրող, ինչով պայմանավորված որոշում է կայացվել «Էնջինիրինգ» ՓԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Ընթացակարգի շրջանակներում «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի կողմից 08.02.2022թ.-ին ներկայացված բողոքը և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի կողմից 17.02.2022թ.-ին ներկայացված համանման բողոքը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 10.03.2022թ.-ի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/19 ծածկագրով կայացրած որոշմամբ բավարարվել է ամբողջությամբ և պարտավորեցվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 04.02.2022թ.-ի թիվ 2-4 արձանագրությամբ կայացված ընկերությունների հայտերը անբավարար գնահատելու և մերժելու ու գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին կայացված որոշումները:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի

միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է ընթացակարգի շրջանակներում ստանձնած որևէ պարտավրություն, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Ուստի, այն դեպքերում, երբ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունն առաջանում է այն ժամանակ, երբ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտում է գնման գործընթացի

շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 10.03.2022թ.-ի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/19 ծածկագրով կայացրած որոշմամբ հաստատված հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ վերոնշյալ որոշմամբ պարտավորեցվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 04.02.2022թ.-ի թիվ 2-4 արձանագրությամբ կայացված ընկերությունների հայտերը անբավարար գնահատելու և մերժելու ու գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին կայացված որոշումները:

Տվյալ պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «Էնջինիրինգ» ՓԲԸ-ի հայտում՝ մոդելներ չներկայացնելու մասով, անհամապատասխանություն արձանագրելու և վերջինիս հայտը մերժելու մասին կայացված որոշումը նույնանում է «Տ-Քնսթրաքշն» ՓԲԸ-ի և «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ-ի մասերով Հանձնաժողովի կողմից կայացված որոշման հետ, որպիսի գործողությունները ԳԲՔԱ-ԼՕ-2022/19 ծածկագրով կայացրած որոշմամբ դիտարկվել են ոչ իրավաչափ, ինչով պայմանավորված վերանում է Մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, որն էլ կհանգեցներ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված դրույթների կիրառմանը:

Ավելին՝ Օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ … գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն «Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործունեության կարգը հաստատելու մասին» հրամանի 26-րդ կետի համաձայն՝ Անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում մասնակի, միայն դատարանի կողմից:

Նույն հրամանի 27-րդ կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից ընդունված որոշումը ենթակա է անվերապահ կատարման, եթե այն դատական կարգով չի վերացվել:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրահանգման, որ Անձի կայացրած և չվերացված

որոշումն ունի համապարտադիր բնույթ, իսկ նախկինում քննված՝ չվերացված որոշմամբ հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին ապացուցման ենթակա չեն, դրանք այն փաստական տվյալներն են, որոնք հետազոտման և գնահատման ենթակա չեն և ունեն ապացուցողական ուժ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 10.03.2022թ.-ի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2022/19 ծածկագրով կայացրած իրավապարտադիր ուժ ունեցող որոշմամբ հաստատված փաստական հանգամանքները, արձանագրում է, որ Հանձնաժողովի կողմից «Էնջինիրինգ» ՓԲԸ-ի հայտը, մոդելները չներկայացնելու հիմքով, անբավարար գնահատելու մասին կայացված որոշումն իրավաչափ չէ:

Անդրադառնալով Հանձնաժողովի կողմից արձանագրված մնացած անհամապատասխանություններին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Հանձնաժողովի՝ ընկերության հայտը մերժելու մասին կայացված արձանագրությունը, Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով, հստակ չի պարունակում դրանց հիմնավորումը, մասնավորապես՝ Հանձնաժողովը նշել է, որ «Էնջինիրինգ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջներին, արտադրողը նման մոդելային շարք չունի, որոշ տողերով ներկայացված մոդելները շատ հզոր են, սակայն նույն արձանագրությամբ նշված չէ հիմնավորում այն մասին, թե նշված մոդելների տեխնիկական բնութագրերը հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերից ինչով են տարբերվում, կամ ներկայացված մոդելների ո՞ր չափորոշիչները չեն համապատասխանում հրավերի պահանջներին, հրավերի կոնկրետ ո՞ր պահանջին չի համապատասխանում, առկա չէ կոնկրետ նկարագրություն կամ համեմատական որևէ փաստաթուղթ կատարված ուսումնասիրության մասին, որպիսի պայմաններում, Հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով նախատեսված դրույթի խախտում:

Միաժամանակ Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ է տրվել Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված պահանջների խախտում, քանի որ Ընթացակարգի հրավերի հայտերի ներկայացման և բացման վերջնաժամկետ է սահմանվել 17.01.2022թ.-ին, իսկ Հանձնաժողովի կողմից «Էնջինիրինգ» ՓԲԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը կայացվել է Հանձնաժողովի 04.02.2022թ.-ի նիստի թիվ 2-4

արձանագրությամբ՝ տասն աշխատանքային օրվա խախտմամբ, ինչի արդյունքում, այս մասով նույնպես, ընկերությունների հայտերն անբավարար գնահատելու և մերժելու մասին Հանձնաժողովի կողմից կայացված որոշումն իրավաչափ չէ:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Կարգի 32-րդ կետի 21-րդ ենթակետով սահմանված դրույթն իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում է, որ մասնակցի կողմից ներկայացված հայտի գնահատումը հանձնաժողովն իրականացնում է հայտի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Ընդ որում՝ մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ տասն աշխատանքային օրվա ընթացքում գնահատում իրականացնելը ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականությունների կանխարգելմանը և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում այն ուղղված է իրավունքների և պարտականությունների սահմանմանն ու իրագործմանը, և վերջապես՝ հետապնդում է իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ 02.04.2014թ.-ին կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ հայտնել է, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը:

Սահմանադրական դատարանի մեկ այլ 18.04.2014թ.-ին կայացրած թիվ ՍԴՈ-1148 որոշմամբ, գտել է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Իրավակարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի հիմքում պետք է դրվի այն հիմնարար մոտեցումը, որ օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքը հանդիսանում է իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերից մեկը:

Փաստն այն է, որ վեճի առարկա իրավահարաբերությունների շրջանակում խախտվում է անձի օրինական ակնկալիքների իրավունքը:

Սահմանադրական դատարանը 18.04.2006թ.-ին կայացրած թիվ ՍԴՈ-630 որոշմամբ, մասնավորապես, արձանագրել է, որ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «Էնջինիրինգ» ՓԲԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 17.02.2022թ.-ի թիվ 26/26-1/2822-2022 գրությամբ «Էնջինիրինգ» ՓԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/77 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**